



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«30» 09 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000077

Ձեռնարկողը՝

«Մանիսա» ՍՊԸ
Սյունիքի մարզ, ք. Կապան,
Հորքի թաղ. 1/6

Գործունեությունը՝

Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակման «Մանիսա» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2019-2020 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցությունն փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000077

« 30 » 09 2019թ.

Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակման «Մանիսա» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2019-2020 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Մանիսա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Սյունիքի մարզի Կապան համայնք

ՀՀ Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակման Մանիսա տեղամասում 2019-2020թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Կապանի ավազակոպճագլաքարային խառնուրդի երևակման տարածքը վարչական առումով գտնվում է Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում, Ողջի գետի ողողահունում և զբաղեցնում է մոտ 0.564 հա տարածք:

Կապանի ավազակոպճային խառնուրդի երևակման «Մանիսա» տեղամասի օգտակար հանածոն նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական պաստառահումքի արտադրության համար: Երևակման օգտակար հանածոն իր որակական հատկություններով պետք է բավարարի ՀՍ ԳՕՇ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍ ԳՕՇ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների ստացումը:

Ուսումնասիրվող տարածքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS 84 համակարգով՝



N	X	Y
1	4344388.2	8614064.9
2	4344357.5	8614008.8
3	4344328.5	8613932.2
4	4344354.3	8613899.1
5	4344380.3	8613944.3
6	4344402.5	8614051.1

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, հետախուզական փորվածքների անցման, նմուշարկման և փորձնական արդյունահանման աշխատանքների համալիրով:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում, 36.0մ³ ընդհանուր ծավալով:

Երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են լցման, որը նախատեսվում է իրականացնել ձեռքով: Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 30խմ:

Նախատեսվում է 6 հետախուզահորերի անցում, որոնց խորությունը կլինի 3մ, կտրվածքը՝ 2.0քմ: Հետախուզական փորվածքները և փորձնական բացահանքը նախատեսվում է տեղադրել Ողջի գետի հիմնական հունից 10-15մ հեռավորության վրա:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 36մ:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից:

Նախատեսվում է վերցնել 6 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ամբողջ հզորությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.3x0.1մ չափերով: Յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 30 կգ-ի:

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների՝ մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիզիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Ավագակոպճային խառնուրդի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է հետազոտվող երևակման տարածքից կատարել փորձնական հանույթ մոտ 300խմ ծավալով: Նշված մեծածավալ տեխնոլոգիական նմուշ կենթարկվի վերամշակման պատվիրատուի ջարդիչ-տեսակավորման արտադրամասում, որի ընթացքում



կմշակվի ավագակոպճագլաքարային խառնուրդի հարստացման տեխնոլոգիան, կճշտվի ԱԿԽ-ի գրանուլոմետրիական կազմը:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել երևակման ապագա շահագործման ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Երևակման տարածքը գտնվում է Ողջի գետի ողողահունում՝ հողաբուսական շերտը հիմնովին բացակայում է: Ռեկուլտիվացիա նախատեսված է միայն ասֆալտապատ ճանապարհից մինչև երևակում 22մ երկարությամբ 4մ լայնությամբ մոտեցնող ճանապարհը:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հատկացնել 50000 դրամ գումար:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- Վառելիքը և քսայուղերը ներկրել և լիցքավորել ըստ պահանջի, տեղում պահեստավորում չիրականացնել:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին՝ տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:
- Դիզելային շարժիչների սպասարկումը կազմակերպել տեխ. սպասարկման կայաններում:
- Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով ավտոճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով:

Կապանի ավագակոպճագլաքարային խառնուրդի երևակման երկրաբանական ուսումնասիրության ընթացքում «Մանիսա» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, տարին երկու անգամ հաճախականությամբ,



- Ողջի գետի ջրերի մոնիթորինգ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Կապան համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն: Անտառային կոմիտեի գրությունում նշված է, որ կադաստրային քարտեզների անհամապատասխանության և անճշտության պատճառով տարածքը համընկնում է անտառային հողերի հետ, սակայն փաստացի այն դուրս է անտառային հողերից: Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գրության համաձայն հայցվող հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ հողատեսքը այլ հողատեսք: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, Ողջի գետի ջրերի մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

- Ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում բացառել գետի հունի խախտումը, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Մանիսա>> ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապանի ավազակոպճազլաքարային խառնուրդի երևակման «Մանիսա» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով 2019-2020թ.թ.ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հատի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Մետրոպյան